

# Վիկտորինա «Կլիմայի փոփոխություն»

# Վիկտորինայի կանոնները

Վիկտորինան «Կլիմայի փոփոխություններ» թեմայով 100 հարցից բաղկացած խաղ է: Հարցերն օգնում են ավելի լավ յուրացնել «Կլիմայական արկղիկ» ձեռնարկի նյութերը, հիմնովին ուսումնասիրել կլիմիայի փոփոխությունների հիմնախնդիրները:

Վիկտորինայի հարցերը կազմված են «Կլիմայական արկղիկ» ձեռնարկի թեմաներին համապատասխան.

1. Կլիմայի փոփոխությունների հիմնախնդիրները.
2. Ինչպես են կլիմայի փոփոխություններն ազդում բնության և մարդու վրա: Արդյոք հնարավոր է հարմարվել կլիմայի փոփոխությունների անխուսափելի հետևանքներին.
3. Ինչպես կանխարգելել կլիմայի վտանգավոր փոփոխությունները:

Յուրաքանչյուր հարց պատասխանների չորս տարբերակ ունի, որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխանը: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր: Ամենաշատ միավորներ հավաքած մասնակիցը հաղթող է ճանաչվում:

Ճիշտ պատասխանները տրված են «Պատասխաններ» քարտում:

# ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ



**1** տարբերակներ

**Օդի միջին ջերմաստիճանը երկրագնդի վրա XIX դարի կեսերի համեմատությամբ**

**Ա** չի փոփոխվել

**Բ** նվազել է

**Գ** բարձրացել է

**Դ** կտրուկ բարձրացել է, այնուհետև կրկին նվազել

**2**

տարբերակներ

## Որքանով է բարձրացել օդի ջերմաստիճանը երկրագնդի վրա վերջին 150 տարվա ընթացքում

| | |
|---|---|
| Ա | մոտ 1°C -ով |
| Բ | մոտ 3°C -ով |
| Գ | մոտ 5°C -ով |
| Դ | մոտ 10°C -ով |

3

տարբերակներ

Երկրի օդային թաղանթը կոչվում է

Ա ջրոլորտ

Բ քարոլորտ

Գ մթնոլորտ

Դ կենսոլորտ

4 տարբերակներ

Կլիման

| | |
|---|---|
| Ա | ցույց է տալիս տեղումների դիտման հաճախականությունը |
| Բ | եղանակի բազմամյա ռեժիմն է |
| Գ | եղանակի վիճակն է մեկ շաբաթվա ընթացքում |
| Դ | եղանակի ցուցանիշ |

**5**

տարբերակներ

**Նշվածներից որը չի օգտագործվում տվյալ վայրի կլիման բնութագրելիս**

**Ա** օդի ջերմաստիճանը

**Բ** մթնոլորտային տեղումների քանակը

**Գ** գերիշխող քամիները

**Դ** աշխարհագրական դիրքը

6

տարբերակներ

Որ կլիմայական գոտում է գտնվում Բարսելոնա քաղաքը

Ա մերձարևադարձային

Բ բարեխառն

Գ արևադարձային

Դ հասարակածային

7

տարբերակներ

Նշված երկրներից, որն առավել խոնավ կլիմա ունի

Ա Հայաստան

Բ Մոնղոլիա

Գ Անգոլա

Դ Հունաստան

8

տարբերակներ

Որ կլիմայական գոտուն է բնորոշ մշտապես բարձր ջերմաստիճանը և առատ տեղումները

Ա հասարակածային

Բ մերձհասարակածային

Գ արևադարձային

Դ մերձարևադարձային

| 9 տարբերակներ | Որ կլիմայական գոտու, որ մարզում է գտնվում Հայաստանը |
|---|---|
| Ա | մերձարևադարձային միջերկրածովային |
| Բ | բարեխառը ծովային |
| Գ | չոր մերձարևադարձային |
| Դ | բարեխառը մուսոնային |

**10** տարբերակներ

**Ձմռանը որ օդային զանգվածներն են ներթափանցում մերձհասարակածային կլիմայական գոտի**

| | |
|---|---|
| **Ա** | արկտիկական |
| **Բ** | բարեխառն |
| **Գ** | հասարակածային |
| **Դ** | արևադարձային |

## 11
տարբերակներ

**Որ տիպի օդային զանգվածին է բնորոշ բարձր ջերմաստիճանը և ցածր խոնավությունը**

Ա արկտիկական

Բ բարեխառն

Գ հասարակածային

Դ արևադարձային

**12**

տարբերակներ

**Նշել մոլորակի այն վայրը, որտեղ գրանցվել է օդի ամենաբարձր ջերմաստիճանը**

| | |
|---|---|
| Ա | Նամիբ անապատ |
| Բ | Մեռյալ ծովի ափ |
| Գ | Մահվան հովիտ |
| Դ | Գոբի անապատ |

13

տարբերակներ

## Որտեղ է կլիմայի տաքացումը տեղի ունենում ավելի արագ

| | |
|---|---|
| Ա | Արկտիկայում |
| Բ | Արևադարձային տարածաշրջանում |
| Գ | Հարավային Ամերիկայում |
| Դ | Ավստրալիայում |

| | |
|---|---|
| **14** տարբերակներ | **Եղանակի դիտարկումներով, ուսումնասիրությամբ և կանխատե-սումներով զբաղվող գիտություն է** |
| **Ա** | **կլիմայագիտությունը** |
| **Բ** | **ջրաբանությունը** |
| **Գ** | **սառցաբանությունը** |
| **Դ** | **օդերևութաբանությունը** |

**15** տարբերակներ

## Ինչ է ուսումնասիրում հնէակլիմայագիտությունը

| | |
|---|---|
| **Ա** | ժամանակակից կլիմայական փոփոխությունները |
| **Բ** | անցյալի կլիման |
| **Գ** | կլիմայական պայմանները լեռներում |
| **Դ** | ապագայի կլիման |

| 16 տարբերակներ | Ինչ են ուսումնասիրում գիտնականները, որպեսզի որոշեն ինչպիսին էր կլիման հարյուր հազար տարի առաջ |
|---|---|
| Ա | ծառերի տարեկան օղակները |
| Բ | օդի պղպջակներն անտարկտիկական սառույցում |
| Գ | աէրոտիեզերական լուսանկարները |
| Դ | օդերևութաբանական դիտարկումների տվյալները |

**17**

տարբերակներ

**Երբ է ավարտվել վերջին սառցե դարաշրջանը**

| | |
|---|---|
| **Ա** | մոտ 100 տարի առաջ |
| **Բ** | մոտ 1000 տարի առաջ |
| **Գ** | մոտ 10000 տարի առաջ |
| **Դ** | մոտ 100000 տարի առաջ |

| 18 տարբերակներ | Հայաստանում որտեղ է դիտվում մթնոլորտային տարեկան  տեղումների առավելագույն քանակը |
|---|---|
| Ա | Արարատյան դաշտում |
| Բ | Սևանա լճի ափին |
| Գ | Արագածի գագաթին |
| Դ | Շիրակի դաշտում |

**19** տարբերակներ

**Հայաստանում գրանցված նվազագույն ջերմաստիճանը եղել է**

| | |
|---|---|
| **Ա** | -15°C |
| **Բ** | -25°C |
| **Գ** | -46°C |
| **Դ** | -30°C |

**20** տարբերակներ

**Ինչպես է հրաբխի ժայթքումն ազդում կլիմայի վրա**

Ա ջերմաստիճանը նվազում է

Բ ջերմաստիճանը բարձրանում է

Գ առաջացնում է փոթորիկներ

Դ ոչ մի կերպ չի ազդում

**21**

տարբերակներ

**Թվարկված գազերից որն է ջերմոցային գազ**

| | |
|---|---|
| Ա | ազոտ ($N_2$) |
| Բ | ածխաթթու գազ ($CO_2$) |
| Գ | ածխածնի օքսիդ (CO) |
| Դ | թթվածին ($O_2$) |

**22**

տարբերակներ

**Որ ջերմոցային գազին է բաժին ընկնում մարդու գործունեությամբ պայմանավորված արտանետումների 75% -ը**

**Ա** մեթան ($CH_4$)

**Բ** ածխաթթու գազ ($CO_2$)

**Գ** ծծմբի հեքսաֆտորիդին ($SF_6$)

**Դ** ազոտի ենթօքսիդին ($N_2O$)

# ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ



23

տարբերակներ

Կլիմայի տաքացման արդյունքում Համաշխարհային օվկիանոսի մակարդակը

Ա բարձրանում է

Բ իջնում է

Գ չի փոխվում

Դ հնարավոր չէ գնահատել

24 տարբերակներ

Որ երկիրը կտուժի օվկիանոսի մակարդակի բարձրացման արդյունքում

Ա Շվեյցարիա

Բ Բանգլադեշ

Գ Ավստրիա

Դ Նեպալ

**25**
տարբերակներ

**Որ քաղաքի համար օվկիանոսի մակարդակի բարձրացումը վտանգ չի ներկայացնում**

| | |
|---|---|
| Ա | Բանգկոկի |
| Բ | Նոր Օռլեանի |
| Գ | Շանհայի |
| Դ | Վիեննայի |

| 26 տարբերակներ | ՀՀ-ում անտառածածկ մակերեսը կազմում է |
|---|---|
| Ա | մոտ 10% |
| Բ | մոտ 20% |
| Գ | մոտ 30% |
| Դ | մոտ 40% |

**27**

տարբերակներ

**Որ տարածաշրջանում են առավել հաճախ առաջանում տորնադոներ (պտտահողմ)**

Ա Կենտրոնական Ասիայում

Բ Արկտիկայում

Գ Աֆրիկայի արևմտյան ափերին

Դ ԱՄՆ-ի Կենտրոնական և Հարավային նահանգներում

28

տարբերակներ

Որ երևույթի առաջացման վրա կլիմայի փոփոխությունը չի ազդում

Ա երաշտ

Բ պտտահողմ (տորնադո)

Գ երկրաշարժ

Դ ձնահյուս

29

տարբերակներ

Որ կացարանն է պատրաստվում ձնից և սառույցից

Ա Յուրտա

Բ Իգլու

Գ Աիլ

Դ Վիգվամ

30

տարբերակներ

Տեսակների բազմազանությամբ ամենահարուստ էկոհամակարգն է

| | |
|---|---|
| Ա | կորալային խութը |
| Բ | տայգայի անտառը |
| Գ | արևադարձային անտառը |
| Դ | աֆրիկյան սավանան |

31

տարբերակներ

Հայաստանի հատուկ պահպանվող տարածքներից որն է արգելոց

| | |
|---|---|
| Ա | Թռչկանի ջրվեժ |
| Բ | «Սևան» |
| Գ | «Խոսրովի անտառ» |
| Դ | «Արփի լիճ» |

32

տարբերակներ

Որ կենդանու վրա է ազդում հյուսիսային բևեռային սառույցների հալվելը

Ա պինգվինի

Բ սպիտակ արջի

Գ գորշ արջի

Դ դաշտամկան

33

տարբերակներ

Որ երկրում է գտնվում Հարավարևմտյան Ասիայի ամենամեծ քաղցրահամ լիճը

Ա Հայաստան

Բ Իսրայել

Գ Իրան

Դ Վրաստան

34

տարբերակներ

## Նշվածներից որն է էկոտուրիզմի բացասական ազդեցությունը

Ա տեղական բնակչության համար լրացուցիչ եկամտի ստեղծումը

Բ վայրի բնության գրկում արահետների ստեղծումը

Գ բնության ուսումնասիրությունը

Դ էթնիկ սովորությունների ուսումնասիրությունը

| | |
|---|---|
| **35** տարբերակներ | **Հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ արգելված է տնտեսական գործունեությունը** |
| **Ա** | բնության հուշարձաններ |
| **Բ** | արգելավայրեր |
| **Գ** | արգելոցներ |
| **Դ** | ազգային պարկեր |

36

տարբերակներ

Որ երկիրն է աշխարհում զբաղեցնում առաջին տեղն անտառների մակերեսով

Ա Կանադա

Բ ԱՄՆ

Գ Բրազիլիա

Դ Ռուսաստան

37

տարբերակներ

Կլիմայական որ գործոնով է պայմանավորված տայգայի հյուսիսային սահմանագիծը

Ա օդի ջերմաստիճան

Բ տեղումների քանակ

Գ մթնոլորտային ճնշում

Դ ամպամածություն

**38** տարբերակներ

**Կլիմայական որ գործոնով է պայմանավորված բարեխառն անտառների հարավային սահմանի դիրքը**

| | |
|---|---|
| Ա | օդի ջերմաստիճան |
| Բ | տեղումների քանակ |
| Գ | մթնոլորտային ճնշում |
| Դ | ամպամածություն |

**39**

տարբերակներ

**Մ.թ.ա. III և II հազարամյակներում ներկա Հայաստանի տարածքի քանի տոկոսն է անտառապատ եղել**

**Ա** մոտ 10%

**Բ** մոտ 30%

**Գ** մոտ 40%

**Դ** մոտ 60%

40

տարբերակներ

Որ գործոնն է առավել ուժեղ ազդում Հայաստանի անտառների դեգրադացման վրա

Ա անտառների օգտագործումը հանգստի և զբոսաշրջության նպատակով

Բ մեծածավալ անտառահատումները

Գ մթնոլորտային ճնշման տատանումները

Դ մթնոլորտում օզոնի քանակի նվազումը

41

տարբերակներ

Որ ծառատեսակը չի հանդիպում Հայաստանի բնական անտառներում

Ա խեժափիճի

Բ հաճարենի

Գ կաղնի

Դ թխկի

**42**

տարբերակներ

**Ինչը չի կարող նպաստել անտառային հրդեհների բռնկմանը**

| | |
|---|---|
| **Ա** | շոգ եղանակը |
| **Բ** | կրակի հետ անզգույշ վարվելը |
| **Գ** | հորդառատ անձրևը |
| **Դ** | տեղումների քանակի նվազումը |

**43** տարբերակներ

**Տայգայի անտառներում ածխածնի պաշարների մեծ մասը գտնվում է**

Ա բուսազանգվածի ռեզերվուարում

Բ անկենդան փայտանյութում

Գ թաղիքում

Դ հողում

**44**
տարբերակներ

**Ինչպիսին է ածխածնի արտանետումը և կլանումն անտառներում, որտեղ շատ են հասուն ծառերը**

**Ա** կլանվում է ավելի շատ, քան արտանետվում է

**Բ** արտանետվում է ավելի շատ, քան կլանվում է

**Գ** կլանումը գրեթե հավասար է արտանետմանը

**Դ** հասուն ծառերը չեն կարող ածխածին կլանել

**45** տարբերակներ

Ինչպիսին է ածխածնի արտանետումը և կլանումն անտառներում, որտեղ շատ են երիտասարդ ծառերը

**Ա** կլանվում է ավելի շատ, քան արտանետվում է

**Բ** արտանետվում է ավելի շատ, քան կլանվում է

**Գ** կլանումը գրեթե հավասար է արտանետմանը

**Դ** երիտասարդ ծառերը չեն կարող ածխածին կլանել

46

տարբերակներ

Խմելու ջրի պաշարների մեծ մասը Երկրի վրա կենտրոնացված է

Ա լճերում

Բ գետերում

Գ սառցադաշտերում

Դ ստորերկրյա ջրերում

**47** տարբերակներ

Խմելու ջրերի ավելի քան 70%-ը մարդու կողմից օգտագործվում է

| | |
|---|---|
| Ա | խմելու նպատակով |
| Բ | սնունդ պատրաստելու նպատակով |
| Գ | սանիտարական կարիքների համար |
| Դ | ոռոգման նպատակով |

48

տարբերակներ

Որ տարածաշրջանն է առավել շատ ենթակա ուժեղ երաշտների

| | |
|---|---|
| Ա | Արևելյան Եվրոպա |
| Բ | Կենտրոնական Ասիա |
| Գ | Կարիբյան ծովի փոքր կղզիներ |
| Դ | Սկանդինավիայի երկրներ |

49

տարբերակներ

Կլիմայի փոփոխությունը Հայաստանում կհանգեցնի

Ա ջրի սակավությանը

Բ գերխոնավությանը

Գ բազմամյա սառցույթի հալմանը

Դ արևադարձային ցիկլոնների առաջացմանը

**50** տարբերակներ

Հարավարևելյան Ասիայում օվկիանոսի մակարդակի բարձրացման պատճառով կկրճատվի

| | |
|---|---|
| Ա | բրնձի արտադրությունը |
| Բ | ցորենի արտադրությունը |
| Գ | գարու արտադրությունը |
| Դ | եգիպտացորենի արտադրությունը |

**51**

տարբերակներ

Լեռներում կլիմայի փոփոխության հիմնական ցուցանիշն է

| | |
|---|---|
| Ա | գետերի չորացումը |
| Բ | գետնասկյուռների պոպուլյացիայի կրճատումը |
| Գ | սառցադաշտերի հալոցքը |
| Դ | տեղումների քանակի կրճատումը |

52

տարբերակներ

Նշվածներից որն է բնութագրում սելավը

Ա լանջով ցած գահավիժող ձյան զանգվածը

Բ ուժեղ ջրհեղեղը

Գ փոթորկոտ քամին

Դ ցեխաքարային զանգվածահոսքը

53

տարբերակներ

Ինչու որոշ լեռնային լճեր կլիմայի փոփոխության հետևանքով կարող են դառնալ վտանգավոր

Ա ջրում առաջանում են վտանգավոր քիմիական միացություններ

Բ ջուրը դառնում է չափից ավելի տաք ջերմաստիճանի բարձրացման պատճառով

Գ մակարդակի բարձրացման հետևանքով առաջանում են սելավներ և ջրհեղեղներ

Դ լճերում ի հայտ են գալիս միջատներ, որոնց խայթոցները վտանգավոր են

54

տարբերակներ

Կլիմայի փոփոխությունից ավելի քիչ է կախված

Ա տուրիզմը

Բ հանքարդյունաբերությունը

Գ գյուղատնտեսությունը

Դ հիդրոէներգետիկան

| 55 տարբերակներ | Կլիմայի փոփոխության հետևանքով Հայաստանում կանխատեսվում է |
|---|---|
| Ա | կիսաանապատային գոտու կրճատում |
| Բ | անտառային գոտու ընդլայնում |
| Գ | անտառային գոտու կրճատում |
| Դ | ալպյան մարգագետինների ընդլայնում |

56

տարբերակներ

Որքանով է կրճատվել սառցապատ մակերեսն Արկտիկայում վերջին 40 տարիներին

Ա մոտ 5%-ով

Բ մոտ 20%-ով

Գ մոտ 50%-ով

Դ մոտ 70%-ով

57

տարբերակներ

Թվարկված կենդանիներից որն է ընդգրկված ՀՀ Կարմիր գրքում

Ա գորշ արջը

Բ բեզոարյան այծը

Գ գայլը

Դ աղվեսը

58

տարբերակներ

## Ինչ է «ջերմային կղզին»

Ա կղզի, որը գտնվում է արևադարձային լայնություններում

Բ կղզի, որը կարող է անցնել ջրի տակ ծովի մակարդակի բարձրացման պատճառով

Գ քաղաքի կենտրոն, որտեղ ջերմաստիճանն ավելի բարձր է քան ծայրամասերում

Դ անտառի հրդեհված հատված

**59**

տարբերակներ

Ով կարող է առաջին հերթին զրկվել աշխատանքից կլիմայի տաքացման հետևանքով

| | |
|---|---|
| Ա | Սինգապուրի բանկիրը |
| Բ | Հնդկաստանի ուսուցիչը |
| Գ | Մեքսիկայի հրշեջը |
| Դ | Քենիայի ֆերմերը |

**60** տարբերակներ

Նշվածներից ում կարելի է անվանել կլիմայական միգրանտ

**Ա** գերմանացուն, ով տեղափոխվել է Միջերկրական որևէ երկիր,

**Բ** չինացուն, ով մեկնել է Գերմանիա գումար վաստակելու

**Գ** ԱՄՆ մեկնած Հայիթիի բնակչին, ում գյուղն ավիրվել է փոթորկից

**Դ** Կալիֆոռնիա տեղափոխված հայը

61

տարբերակներ

Բնակչության որ մասն է ապրում աշխարհում աղքատության շեմից ցածր

| | |
|---|---|
| Ա | 7% |
| Բ | 15% |
| Գ | 35% |
| Դ | 50% |

# ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՄԵՂՄՈՒՄԸ ԵՎ ԱԾԽԱԾՆԻ ՀԵՏՔԸ



62

տարբերակներ

Ջերմոցային գազերի արտանետումներում որ ոլորտն ունի ամենամեծ մասնաբաժինը

Ա անտառահատումներ

Բ ավտոտրանսպորտ

Գ էներգիայի արտադրություն և սպառում

Դ գյուղատնտեսություն

63

տարբերակներ

Որ երկիրն է արտանետում ամենաշատ քանակությամբ ջերմոցային գազեր

Ա ԱՄՆ

Բ Չինաստան

Գ Ռուսաստան

Դ Մեծ Բրիտանիա

64

տարբերակներ

Նշված էներգիայի աղբյուրներից որն է համարվում չվերականգնվող

Ա մակընթացություն և տեղատվություն

Բ կենսավառելիք

Գ նավթ

Դ արևային էներգիա

65

Նշված էներգակիրներից որը չի հանդիսանումածխաջրածնային

տարբերակներ

Ա ուրան

Բ բնական գազ

Գ տորֆ

Դ քարածուխ

**66**

տարբերակներ

Նշված էներգիայի աղբյուրներից որ մեկի սպառումն է ամենից շատ աշխարհում

Ա բնական գազի

Բ նավթի

Գ փայտի

Դ քամու էներգիայի

67

տարբերակներ

Որ երկրից է Հայաստանը ներմուծում բնական գազ

Ա Ղազախստանից

Բ Ուկրաինայից

Գ Ռուսաստանից

Դ Վրաստանից

68

տարբերակներ

Որ էներգիայի աղբյուրի օգագործումն է բերում ջերմոցային գազերի նվազագույն արտանետման

Ա քարածուխ

Բ բնական գազ

Գ արևային էներգիա

Դ նավթ

69

տարբերակներ

Որ էներգիայի աղբյուրի օգտագործումն է բերում ջերմոցային գազերի առավելագույն արտանետման:

Ա ածուխ

Բ արևային էներգիա

Գ նավթ

Դ բնական գազ

**70** տարբերակներ

**ՀՀ ներմուծվող և արտահանվող ապրանքների քանի տոկոսն է բաժին հասնում երկաթուղային տրանսպորտին**

| | |
|---|---|
| **Ա** | 30% |
| **Բ** | 90% |
| **Գ** | 10% |
| **Դ** | 70% |

71

տարբերակներ

Որն է ատոմակայանների գլխավոր էկոլոգիական խնդիրը

Ա ջերմոցային գազերի արտանետումներ

Բ վտանգավոր թափոնների գոյացում և աղետալի վթարների առաջացման ռիսկեր

Գ էկոլոգիական խնդիրներ չկան

Դ միջուկային վառելիք երկրի ընդերքում գրեթե չի մնացել

72

տարբերակներ

Հողմակայանները չեն կառուցվում

| | |
|---|---|
| Ա | ափամերձ տարածքներում |
| Բ | ծովում, ափից ոչ այնքան հեռու |
| Գ | լեռներում |
| Դ | օվկիանոսի մեջտեղում |

**73** տարբերակներ

**Կենսազանգվածի օգտագործման թերությունն է**

| | |
|---|---|
| Ա | $CO_2$-ի արտանետումները մթնոլորտ չեզոք են |
| Բ | կենսազանգվածի օգտագործումը նվազեցնում է թափոնների քանակը |
| Գ | կենսագազի ստացմանը զուգընթաց՝ գոմաղբից կարելի է ստանալ պարարտանյութեր |
| Դ | հում կենսազանգվածը տեղափոխելն անհարմար է և ծախսատար |

74

տարբերակներ

Բրազիլիայում ավտոմոբիլային վառելիքի 1/5 մասն արտադրվում է

Ա բանանի կեղևից

Բ սուրճի հատիկներից

Գ շաքարեղեգից

Դ կոկոսի յուղից

75 տարբերակներ

Որ էլեկտրակայանը կապված չէ ջրաէներգետիկայի հետ

Ա ՀԷԿ՝ հիդրոէլեկտրակայան

Բ ՋԷԿ՝ ջերմաէլեկտրակայան

Գ ՀԿԷԿ՝ հիդրոկուտակող էլեկտրակայան

Դ ՄԷԿ՝ մակընթացային էլեկտրակայան

76

տարբերակներ

Որ Եվրոպական երկրում է էլեկտրաէներգիայի 1/3 -ն արտադրվում երկրաջերմային էլեկտրակայաններում

Ա Իսպանիայում

Բ Իտալիայում

Գ Իսլանդիայում

Դ Իռլանդիայում

77

տարբերակներ

Վերականգնվող էներգիայի որ աղբյուրը չի կարող օգտագործվել Հայաստանում

Ա մակընթացային

Բ քամու

Գ արևային

Դ կենսազանգվածային

**78** տարբերակներ

ՀՀ-ում էներգիայի սպառման ընդհանուր ծավալի մեծ մասը բաժին է ընկնում

Ա նավթին

Բ գազին

Գ արևային էներգիային

Դ քարածխին

**79**

տարբերակներ

**Որ երկրում են հողմակայանները արտադրում ամբողջ էլեկտրաէներգիայի 30%-ը**

| | |
|---|---|
| Ա | Ավստրալիայում |
| Բ | Դանիայում |
| Գ | ԱՄՆ-ում |
| Դ | Մեծ Բրիտանիայում |

80

տարբերակներ

Որ քաղաքում է ավելի արդյունավետ օգտագործելու Արևի էներգիան

| | |
|---|---|
| Ա | Երևանում |
| Բ | Օսլոյում |
| Գ | Լոնդոնում |
| Դ | Կիևում |

81

տարբերակներ

Հայաստանի որ վայրում է կառուցվել առաջին հողմային էլեկտրակայանը

Ա Պուշկինի լեռնանցքում

Բ Ջաջուռի լեռնանցքում

Գ Քարախաչի լեռնանցքում

Դ Փամբակի լեռնանցքում

82

տարբերակներ

**Ինչ է նշանակում «կարգ A» պիտակավորումը էլեկտրական սարքերի վրա**

**Ա** սարքերն արտադրված են էլեկտրախնայող գործարանում

**Բ** այս սարքերը սպառում են շատ էլեկտրաէներգիա

**Գ** այս սարքերն ամենահզորն են

**Դ** այս սարքերը սպառում են քիչ էլեկտրաէներգիա

**83** տարբերակներ

**Նշվածներից որն է նպաստում ջերմոցային գազերի արտանետմանը**

**Ա** էլեկտրական տաքացուցիչների օգտագործումը

**Բ** ջերմային անդրադարձիչների օգտագործումը

**Գ** մուտքի դռան ջերմամեկուսացումը

**Դ** լուսամուտների ջերմամեկուսացումը

84

տարբերակներ

Որն է լուսադիոդային  լամպերի առավելությունը

Ա ունեն ավելի բազմազան դիզայն

Բ կարելի է գցել սվորական աղբամանների մեջ

Գ ծառայում են շատ ավելի երկար՝ ծախսելով ավելի քիչ էներգիա

Դ ավելի էժան են

85

տարբերակներ

**Սպառվող էլեկտրաէներգիայի մոտավորապես որ մասն է օգտագործվում լուսավորման նպատակով**

| | |
|---|---|
| Ա | 5% |
| Բ | 15% |
| Գ | 35% |
| Դ | 55% |

## 86 Ինչ է ածխածնային հետքը

տարբերակներ

| | |
| --- | --- |
| Ա | Ածխաթթու գազի պարունակությունն է մթնոլորտում |
| Բ | Երկրի անտառներում գտնվող ածխածնի պաշարների ամբողջությունն է |
| Գ | Մարդու գործունեությունից արտանետված ջերմոցային գազերի քանակն է |
| Դ | հանածո վառելիքում պարունակվող ածխածնի պաշարներն են |

87

տարբերակներ

Ածխաթթու գազը կազմում է մարդու գործունեության պատճառով արտանետված ջերմոցային գազերի

| | |
|---|---|
| Ա | մոտ 35% -ը |
| Բ | մոտ 50% -ը |
| Գ | մոտ 75% -ը |
| Դ | մոտ 95% -ը |

**88**

տարբերակներ

**Ինչն է մեզ օգնում գնահատել սարքի էներգարդյունավետությունը**

| | |
|---|---|
| **Ա** | էներգարդյունավետության պիտակները |
| **Բ** | սարքերի արժեքը |
| **Գ** | սարքերի ծառայելու ժամկետը |
| **Դ** | նյութը, որից պատրաստված է սարքը |

89

տարբերակներ

Ինչպես կարող են անհատը կամ կազմակերպությունը փոխհատուցել սեփական ածխածնային հետքը

Ա ընտրել նոր էներգաարդյունավետ սարքեր

Բ անջատել սարքերը և լուսավորությունը, երբ դրանք չեն օգտագործվում

Գ նվազեցնել լուսավորող սարքերի թիվը

Դ տնկել ծառեր

90

տարբերակներ

Տրանսպորտի որ տեսակին է բաժին ընկնում ջերմոցային գազերի արտանետումների ամենամեծ քանակը

Ա երկաթուղային

Բ ջրային

Գ օդային

Դ ավտոմոբիլային

91

տարբերակներ

Տրանսպորտային որ միջոցն ունի նվազագույն ազդեցությունը կլիմայի վրա

Ա ավտոբուս

Բ անձնական ավտոտրանսպորտ

Գ հեծանիվ

Դ մետրո

92 Ակտիվ է կոչվում այն տունը, որտեղ

տարբերակներ

| | |
|---|---|
| Ա | չի օգտագործվում արտաքին սնուցմամբ էներգիա |
| Բ | արտադրվում է էներգիա |
| Գ | ամեն ինչ կառավարվում է ավտոմատ համակարգով |
| Դ | ապրում են էկոլոգիական շարժման ակտիվիստներ |

93

տարբերակներ

Հյուսիսային երկրներում պասիվ է համարվում այն տունը, որը

| | |
|---|---|
| Ա | գրեթե չի օգտագործում էներգիա |
| Բ | ջերմության կորուստ գրեթե չի ունենում |
| Գ | չի համապատասխանում շինարարական նորմերին |
| Դ | չի կիրառում ավտոմատ կարգավորում |

94

տարբերակներ

**Ամենից շատ ջերմությունը տանից հեռանում է**

Ա հատակի միջոցով

Բ պատուհանի միջոցով

Գ պատերի միջոցով

Դ առաստաղի միջոցով

95

տարբերակներ

**Որ աղբի տեսակն է ավելի երկար քայքայվում**

| | |
|---|---|
| Ա | թուղթ |
| Բ | սննդային մնացորդներ |
| Գ | պլաստիկ |
| Դ | երկաթ |

**96** տարբերակներ

**Աղբահանության հետքը նվազեցնելու համար գնումներ կատարելիս պետք է**

| | |
|---|---|
| **Ա** | խանութում գնել մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային տոպրակ |
| **Բ** | օգտագործել մի քանի փոքր պոլիէթիլենային տոպրակներ |
| **Գ** | խանութում գնել մեկանգամյա օգտագործման թղթե տոպրակ |
| **Դ** | օգտագործել կտորից տոպրակ |

| 97 տարբերակներ | Որ տեսակի մթերքն ունի նվազագույն ածխածնային հետքը |
| --- | --- |
| Ա | տեղական արտադրության բանջարեղեն |
| Բ | տեղական արտադրության մսամթերք |
| Գ | այլ երկրից ներկրված մսամթերք |
| Դ | հեռավոր երկրներից ներկրված էկզոտիկ մրգեր |

**98**

տարբերակներ

Ճաշ եփելիս էներգիա խնայելու համար պետք է

Ա կաթսայի հատակը լինի գոգավոր

Բ կաթսան լինի կափարիչով փակված

Գ հատակը լինի ավելի փոքր քան գազայրիչը

Դ կաթսան լինի միշտ բաց

99

տարբերակներ

Որ երկրում է ստորագրվել ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիան:

Ա Բրազիլիա

Բ Գերմանիա

Գ Չինաստան

Դ ԱՄՆ

100

տարբերակներ

Որ երկրում է ընդունվել Կիոտոյի արձանագրությունը

Ա ԱՄՆ

Բ Ճապոնիա

Գ Գերմանիա

Դ Ֆրանսիա

# Վիկտորինա «Կլիմայի փոփոխություն»



## Պատասխաններ

# Պատասխաններ

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գ | 21 | Բ | 41 | Ա | 61 | Բ | 81 | Ա |
| 2 | Ա | 22 | Բ | 42 | Գ | 62 | Դ | 82 | Դ |
| 3 | Գ | 23 | Ա | 43 | Դ | 63 | Բ | 83 | Ա |
| 4 | Բ | 24 | Բ | 44 | Գ | 64 | Գ | 84 | Գ |
| 5 | Դ | 25 | Դ | 45 | Ա | 65 | Ա | 85 | Բ |
| 6 | Ա | 26 | Ա | 46 | Գ | 66 | Բ | 86 | Գ |
| 7 | Դ | 27 | Դ | 47 | Դ | 67 | Գ | 87 | Գ |
| 8 | Ա | 28 | Գ | 48 | Բ | 68 | Գ | 88 | Ա |
| 9 | Գ | 29 | Բ | 49 | Ա | 69 | Ա | 89 | Դ |
| 10 | Դ | 30 | Գ | 50 | Ա | 70 | Դ | 90 | Դ |
| 11 | Դ | 31 | Գ | 51 | Գ | 71 | Բ | 91 | Գ |
| 12 | Գ | 32 | Բ | 52 | Դ | 72 | Դ | 92 | Բ |
| 13 | Ա | 33 | Ա | 53 | Գ | 73 | Դ | 93 | Բ |
| 14 | Դ | 34 | Բ | 54 | Բ | 74 | Գ | 94 | Բ |
| 15 | Բ | 35 | Գ | 55 | Գ | 75 | Բ | 95 | Գ |
| 16 | Բ | 36 | Դ | 56 | Բ | 76 | Գ | 96 | Դ |
| 17 | Գ | 37 | Ա | 57 | Բ | 77 | Ա | 97 | Ա |
| 18 | Գ | 38 | Բ | 58 | Գ | 78 | Բ | 98 | Բ |
| 19 | Գ | 39 | Գ | 59 | Դ | 79 | Բ | 99 | Ա |
| 20 | Ա | 40 | Բ | 60 | Գ | 80 | Ա | 100 | Բ |